Ս. Ս. ՄԱՄՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հանցագործության առաջացման պատճառները տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող այն բացասական գործոնների ամբողջությունն են, որոնք հանցագործություն են ծնում։ Այդ գործոնները հավերժական չեն և հասարակության սոցիալական, նյութական և հոգևոր կյանքի փոփոխման հետևանքով իրենք ևս անհրաժեշտ փոփոխության են ենթարկվում։ Բացի այդ դրանք վերջին հաշվով տիրապետող արտադրական հարաբերություններով են պայմանավորվում, ուստի դրանց մասին ճիշտ գաղափար կազմելու համար պետք է ելակետ ընդունել ամենից առաջ արտադրական հարաբերությունների բնույթը։ Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ մի հասարակարգից մյուսին անցնելու հետևանքով հասարակական հարաբերությունները թեև արմատական փոփոխության են ենթարկվում, բայց միանգամից լիակատար չեն վերացվում և դրանց մնացուկները կառչելով նպաստավոր պայմաններից երկար ժամանակ շարունակում են իրենց գոյությունը։

Սովետական իրավաբանական գրականության մեջ շուրջ չորս տասնյակ տարի չէր ուսումնասիրվում հանցագործության առաջացման պատճառները[1], կամ ընդհանուր դեկլարատիվ հայտարարություններ էր արվում այն մասին, որ դրանք կապիտալիզմի մնացուկներ են մարդկանց գիտակցության մեջ[2]։ Չբացահայտել հանցագործության առաջացման իրական բոլոր պատճառները, նշանակում է զրկվել այդ պատճառները վերացնելու միջոցառումներ մշակելու հնարավորությունից։ Միայն վերջին տարիներին են սկսվել նման պատճառների գիտական ուսումնասիրությունները, որոնք, սակայն, բավարար համարել չի կարելի։

Հանցագործության առաջացման պատճառների պրոբլեմը կարելի է քննարկել և հետազոտել տարբեր տեսանկյուններով։ Հանցագործության առաջացման պատճառների գոյությունը, նշանակությունը և կայնությունը հաշվի առնելով, կարելի է դրանք երկու հիմնական խմբի բաժանել։ Առաջին խմբի մեջ մտնում են այն պատճառները, որոնք տվյալ հասարակարգի նյութական, սոցիալական, հոգևոր կյանքի անխուսափելի հետևանք են և պայմանավորվում են դրանց բնույթով։ Դրանք օբյեկտիվ, մարդկանց կամքից անկախ պատճառներ են, որոնք իրենց գոյությունը շարունակում են, քանի դեռ դրանք ծնող հասարակարգը մնում է, նրա հասարակական կեցությունն արմատական փոփոխության չի ենթարկվել։

---

[1] «Уголовное право», общая часть, М., 1943, стр. 100.

[2] «Уголовное право», М., 1947, стр. 55—57.

Այն հասարակարգում, որն իր բնույթով հանցագործության առաջացման համար բացասական գործոններ է ծնում, նշված պատճառների մեջ որոշակի փոփոխություններ հնարավոր են, իսկ վերացումը՝ անհնարին։ Այդ պատճառները կարող են ավելի խորանալ, արմատակալվել, լայն տարածում ստանալ և դրսևորվել իրենց ամբողջ ուժով։ Այդպիսի դեպքում հանցագործությունը մասսայական բնույթ է կրում և տվյալ հասարակության համար անհավոր դառնում։

Հանցագործությունը ծնունդ է առնում ստրկատիրական հասարակարգի ձևավորման պրոցեսում, երբ ծագում են արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործումը, տիրապետման ու ենթարկման հարաբերությունները։ Ստրկատիրական կարգերից ֆեոդալականին և նրանից կապիտալիստականին անցնելու հետևանքով հանցագործություն ծնող պատճառների մեջ տեղի են ունենում որոշ փոփոխություններ, սակայն դրանք հիմնական կողմերով պահպանվում են։ Դա բացատրվում է նրանով, որ այդ երեք հասարակարգերն էլ իրենց հիմքով նույնատիպ են, խարսխվում են համանման սկզբունքների վրա, թեև էական տարբերություններ ունեն։ Դրանց բարձր տիպը կապիտալիստական հասարակարգն է։ Բուրժուական բոլոր երկրներում էլ հասարակության սոցիալական, նյութական և հոգևոր կյանքի պայմանները նույնն են և հանցագործության առաջացումն անխուսափելի է։ Արտադրության կապիտալիստական եղանակը խարբսխվում է արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականության, տնտեսության կապիտալիստական սիստեմի և մարդու կողմից մարդու շահագործման, ինչպես նաև դրանց անբաժան ուղեկիցների՝ պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերի, գործազուրկների մշտական բանակի, բնակչության սոցիալական բացահայտ անհավասարության և համանման այլ սկզբունքների վրա, որոնք կազմում են ոչ միայն հանցագործության անխուսափելի առաջացման ու բուռն աճման պատճառները, այլև դրա տարածման ներքին կյանքի գլխավոր տենդենցը։ Սակայն այդ օբյեկտիվ հանգամանքները կապիտալիստական տարբեր երկրներում ունեն տարածվածության զանազան մակարդակ, ուստի և հանցագործության տարածվածության աստիճանը տարբեր երկրներում նույնը լինել չի կարող։ Կապիտալիզմի օրոք այդ պատճառները հասնում են իրենց գագաթնակետին և հանցագործության խիստ տարածման առիթ հանդիսանում։ Օրինակ, 500 միլիոնից ավելի բնակչություն ունեցող բուրժուական 19 պետություններում 1950—1960 թթ. խոշոր հանցագործությունները աճել են 65 տոկոսով[3]։ Բացի այդ կապիտալիզմը նոր պատճառներ է ծնում, որոնք հանցագործության առաջացման պարարտ հող են հանդիսանում։ Օրինակ, տնտեսական ճգնաժամերը, գործազուրկների մշտական բանակը և համանման այլ երևույթները առաջացնում են բացասական գործոններ հանցագործության անխուսափելի տարածման համար։

Հանցագործությունը սոցիալական երևույթ է, ուստի դրա պատճառները նույնպես սոցիալական են, որոնք տարբեր երկրներում որոշակի առանձնահատկություններ ունեն։ Երկրագնդի ոչ մի երկրում հանցագործության այնպիսի աճ չկա, ինչպես ԱՄՆ-ում։ Պրեզիդենտ Ջոնսոնը 1965 թ. երկու անգամ հանդես գալով այդ մասին նշել է, որ հանցագործությունները անհավոր չափով տարածվել են երկրում և դա սարսափ է առաջացնում[4]։ ԱՄՆ-ում հանցագոր-

[3] «Советская юстиция», 1965, № 6, стр. 28.

[4] «Երեկոյան Երևան», 1965, № 226։

ծության սոցիալական պատճառներն ավելի խորն ու լայն արմատներ են գցել։ Բացի վերը նշված պատճառներից, ԱՄՆ-ում այնպիսի գործոններ են հանգես գալիս, որոնք միահյուսվելով հանցագործության բուռն աճ են առաջացնում։ Այսպես, ազգային ու ռասայական խտրականությունը, քաղաքական ռեակցիան, թագավորող շահամոլությունն ու եսամոլությունը, բարոյական ու կենցաղային քայքայվածությունը, հանցագործության կազմակերպված բնույթն ու դրա դեմ հետևողական պայքարի բացակայությունը, գաղափարախոսության և բարոյական հայացքների ռեակցիոն էությունը, այս բոլորը ԱՄՆ-ում միահյուսվում են միմյանց հետ և հանցագործության լայն ծավալման տեղիք տալիս։

Ընդհանուր գծերով վերլուծելով հանցագործության առաջացման պատճառների առաջին խումբը, այժմ անցնենք երկրորդ խմբի քննարկմանը։ Ինչպես տեսանք, նշված պատճառների առաջին խումբը տվյալ հասարակարգի արգասիք է, իսկ երկրորդ խումբը չի բխում այդ հասարակարգի սոցիալական, նյութական, հոգևոր կյանքի պայմաններից, ուստի համապատասխան նախադրյալներ ստեղծվելու դեպքում կարող է վերացվել, արմատախիլ արվել։

Այստեղ խոսքը ոչ թե հանցագործության օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների մասին է, այլ սոցիալական, նյութական ու հոգևոր կեցության, որն բացասական գործոններ է ծնում հանցագործության առաջացման համար։ Այդ բացասական գործոնները չնայած հասարակական որոշակի կեցության արդյունք են, բայց աստիճանաբար որոշ ինքնուրույնություն են ձեռք բերում և կարող են իրենց դոյությունը շարունակել այդ կեցությունը վերացվելուց հետո ևս։ Օրինակ, մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը երկար ժամանակ մնում է այն ոչնչացվելուց հետո։ Սոցիալիզմը ոչնչացնում է հանցագործություն ծնող արմատական պատճառները և պայմաններ ստեղծում հանցագործությունը վերացնելու համար։ Սակայն հանցագործության գոյությունը սոցիալիզմի ժամանակ նույնպես անժխտելի փաստ է։ Ի՞նչով բացատրել նման դրությունը։ Կա՞ն արդյոք հանցագործության առաջացման օբյեկտիվ պատճառներ թե ոչ։

Փորձենք պատասխանել այդ հարցին։ Հասարակության մեջ ամեն մի երևույթ իր պատճառն ունի։ Հանցագործությունը ևս իբրև սոցիալական երևույթ, իր ուրույն պատճառն ունի։ Եթե հանցագործությունն իր օբյեկտիվ պատճառները չունենար, ապա դրա վերացումը լուրջ դժվարությունների չէր հանդիպի և հեշտությամբ արմատախիլ կարվեր։ Տարբեր իրավաբան-տեսաբաններ զանազան կերպով են հասկանում տվյալ հարցը։ Օրինակ, Ա. Ս. Շլյապոչնիկովը հանցագործության առաջացման ընդհանուր պատճառները համարում է՝ անցյալի խորթ մնացուկները մարդկանց գիտակցության մեջ, գիտակցության ետ մնալը հասարակական կեցությունից և կապիտալիստական աշխարհի բացասական ազդեցությունը[5]։ Իրավաբանական բառարանում այդ պատճառները վերագրված են մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկներին[6]։ Հանցագործության պատճառները համեմատաբար հաջող են մեկնաբանված «Հանցագործության նախազգուշացումը» կոլեկտիվ աշխատությունում։ Այդ աշխատության հեղինակներն արդարացիորեն նշում են, որ հանցագործության առաջացման սոցիալական արմա-

[5] «Советское государство и право», 1964, № 10, стр. 91.
[6] «Юридический словарь», М., 1956, стр. 256.

տական պատճառները սոցիալիզմի հաղթանակի հետևանքով վերացել են։ Սակայն մեր հասարակարգն իր վրա կրում է անցյալի գաղափարախոսության ու հոգեբանության ազդեցությունը։ Բնակչության որոշ մասի մոտ դեռևս պահպանվող գաղափարական ու բարոյական խորթ մնացուկները նպաստավոր պայմաններում մարդկանց մղում են դեպի հանցագործություն։ Նրանք նաև նշում են, որ անցյալի խորթ մնացուկներ կան նույնպես մեր հասարակարգի սոցիալ-տնտեսական ոլորտում։ Բայց իրենց այդ պնդումը հաստատելու համար որպես ապացույց նշում են արտադրության ցածր մակարդակը և պատերազմի ծանր հետևանքները, որոնք հնարավորություն չեն տվել մեր երկրում լուծելու բնակարանային պրոբլեմը[7]։ Այդպիսի «հիմնավորման» հետ մենք համաձայնվել չենք կարող։ Նրանք փաստորեն ժխտում են սոցիալիզմի օրոք հանցագործության առաջացման օբյեկտիվ պատճառների գոյության հնարավորությունը։ Կասկած չկա, որ բարձր զարգացած տնտեսություն ունեցող երկրում սոցիալիստական կարգեր հաստատվելու դեպքում պայմանները շատ ավելի նպաստավոր կլինեն բնակարանային և այլ պրոբլեմները լուծելու համար, քան այն երկրում, որը անցյալ հասարակարգից ժառանգել է ցածր մակարդակի տնտեսություն։ Սակայն բնակարանային պրոբլեմի լուծված չլինելը վերագրել անցյալ հասարակարգին, նշանակում է խույս տալ դրա օբյեկտիվ պատճառները բացահայտելուց։ Չի կարելի անտեսել ՍՄԿԿ ծրագրի հայտնի դրույթն այն մասին, որ՝ «Աշխատավորների նյութական ապահովության, կուլտուրական մակարդակի և գիտակցականության աճը բոլոր պայմանները ստեղծում է, որպեսզի արմատախիլ արվի հանցագործությունը»[8]։

Ամենից առաջ նշենք, որ հանցագործության ընդհանուր պատճառները հանդես են գալիս միայն կոնկրետ իրադրության պայմաններում։ Սակայն վերոհիշյալ հեղինակների այդպիսի ընդհանուր հայտարարությամբ չեն բացահայտվում հանցագործության պատճառների մեխանիզմը, հանցագործության ընդհանուր և առանձին հանցագործությունների կոնկրետ պատճառների տարաբերակցությունը, ինչպես նաև դրանք արմատախիլ անելու համար նշանակություն ունեցող ուրիշ շատ խնդիրներ։ Չի կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, որ հանցագործության շարժման դինամիկան դեռևս մեզ վերջնական ու ճշգրիտ պատկերացում չի տալիս, եթե մենք չուսումնասիրենք այն իր կոնկրետության մեջ։ Օրինակ, մեր պայմաններում հանցագործության շարժման դինամիկայի գլխավոր տենդենցը՝ նրա սիստեմատիկ ու անշեղ նվազումն է, սակայն դա չի բացառում հանցագործության ոչ միայն գոյությունը, այլև ժամանակավոր ստաբիլիզացիայի, նույնիսկ որոշ տեսակի հանցագործությունների աշխուժացման հնարավորությունը։ Ահա թե ինչու հարկավոր է վերցնել կոնկրետ դեպքերը, հետազոտել և դրանց հիման վրա հետևություններ անել։

Հանցագործության պատճառները կարելի է բացահայտել դրանց առաջացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները հաշվի առնելով միայն։ Առանց օբյեկտիվ պատճառների և սուբյեկտիվ հանգամանքների հանցագործություն չի կարող առաջանալ։ Մեր այս մտքերն ավելի պարզ դարձնենք. հանցագործությունը սոցիալական ու պատմական երևույթ է։ Դա նշանակում է, որ հանցա-

7 «Предупреждение преступлений», М., 1962, стр. 10.
8 ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 529։

գործության առաջացման պատճառը ևս կարող է միայն սոցիալական լինել, բայց ոչ երբեք բնածին։ Մարդը հանցագործ չի ծնվում, այլ այդպիսին է դառնում միջավայրի, որոշակի հանգամանքների ներգործությամբ։

Առանց օբյեկտիվ պատճառների հանցագործության առաջացումն անհնարին է, սակայն դա դեռևս չի նշանակում, որ սոցիալիստական հասարակարգում հանցագործության առաջացումն անխուսափելի է և այդ նպատակով մղվող պայքարն անօգուտ։ Բանն այն է, որ սոցիալիզմի հաղթանակի հետևանքով հանցագործության առաջացման պատճառի հասկացությունը ևս որակական փոփոխության է ենթարկվել։ Եթե կապիտալիստական երկրում, կոպիտ կերպով արտահայտված, այսպիսի սխեմա է ստացվում՝ բացասական գործոններ ծնող հասարակական կեցություն, բացասական գործոններ և այդ գործոնների միաձյուսումն իբրև հանցագործության առաջացման պատճառ և այդ բոլորի հետևանքը՝ հանցագործություն, ապա սոցիալիստական հասարակարգում վերացվել են բացասական գործոններ ծնող հասարակական կեցությունը, սոցիալական, նյութական, հոգևոր աղբյուրները։ Թեև այդ բացասական գործոնները ծնունդ են առել շահագործողական հասարակարգերում, բայց որոշ ինքնուրույնություն ձեռք բերելով, դրանց մի մասը շարունակում է գոյություն ունենալ նաև մեր հասարակարգում։

Իհարկե, չի բացառվում նաև սոցիալիստական կարգերում սոցիալական, նյութական և հոգևոր որոշ պայմաններում առանձին բացասական գործոնների առաջացման հնարավորությունը, սակայն այդ բնորոշ ու վճռող չի կարող լինել սոցիալիստական հասարակարգի համար, թեև կոնկրետ հանցագործության առաջացման պատճառ կարող է դառնալ։ Մյուս կողմից էլ սոցիալիստական հասարակարգի դրական գործոնները հակառակ ուղղությամբ են գործում, բացառվում է դրանց մասսայական առաջացման ու տարածման հնարավորությունը։ Այնպիսի դրական գործոններ, ինչպիսիք են՝ սոցիալիստական հասարակարգի անդամների նյութական ապահովվածության և կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը, կոմունիստական բարոյականության վեհ սկզբունքների արմատավորումը, մասսաների կոմունիստական դաստիարակությունը և այլն, կարևորագույն նշանակություն ունեն հանցագործության առաջացման պատճառների վերացման համար և միաժամանակ որոշում են այդ պատճառների մեխանիզմի առանձնահատկությունները։ Քննարկվող հարցը լուծելու ժամանակ անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ շրջապատող միջավայրը մարդու վրա անհաղթահարելիորեն չի ազդում, ուրիշ խոսքով, նա շրջապատի ազդեցությունը կուրորեն չի ընդունում։ Անձն իր հերթին հակադարձ ներգործություն է ունենում շրջապատի վրա։ Հենց այդ պրոցեսում էլ ձևավորվում են նրա բնավորությունը և վարքագիծը։ Մարդու գիտակցությունն ակտիվ է և ընդունակ ճիշտ վարքագիծ ընտրելու համար։ Օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների միասնության ժամանակ է, որ վերջնականապես ձևավորվում են մարդուն բնութագրող հատկանիշները։

Մարդու բարոյական ձևավորման վրա ներգործում են թե՛ դրական և թե՛ բացասական գործոնները։ Սակայն մինչև այդ հարցի քննարկմանն անցնելը անհրաժեշտ է համառոտ կերպով լուսաբանել հանցագործության ընդհանուր պատճառների և առանձին հանցագործությունների կոնկրետ պատճառների հարաբերակցության հարցը։ Հանցագործությունն ունի ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ պատճառ։ Հանցագործության ընդհանուր պատճառը և

առանձին հանցագործության կոնկրետ պատճառը գտնվում են որոշակի կախվածության, պայմանավորվածության և փոխներգործության մեջ։ Մեկի առկայությունը պայմանավորված է մյուսի գոյությամբ։ Հանցագործության ընդհանուր պատճառը վերջին հաշվով հանդիսանում է առանձին հանցագործության կոնկրետ պատճառ։ Իր հերթին առանձին հանցագործության կոնկրետ պատճառները հանգեցնում են հանցագործության ընդհանուր պատճառների գոյացմանը։ Նման փոխադարձ պայմանավորվածությունը բացատրվում է նրանով, որ հանցագործության ընդհանուր պատճառները ձևավորվում են հանցագործության կոնկրետ պատճառների յուրահատուկ միահյուսումով։ Այդ ընդհանուր պատճառը իր հերթին պայմանավորում է հանցագործության կոնկրետ պատճառը և դրսևորվում նրա միջոցով։ Խորթ գաղափարներն ու բարոյական հայացքները, սովորություններն ու ընտելությունները հանցագործության ընդհանուր պատճառ են։ Սակայն դրանք կարող են դրսևորվել որպես հանցագործության առաջացման պատճառ միայն կոնկրետ դեպքում (մարդասպանություն, մարմնական վնասվածքներ պատճառել, բռնաբարություն և այլն)։ Բայց ամեն մի կոնկրետ դեպք ունի նաև իր անմիջական պատճառը։ Տվյալ հանցագործը մարդ չէր սպանի, եթե խորթ գաղափարներ ու հայացքներ չունենար։ Սակայն սպանությունը կատարվում է այս կամ այն շարժառիթով. շահից ելնելով, խուլիգանական դրդումով, մի այլ հանցագործություն թաքցնելու նպատակով, տուժողի կողմից գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի ազդեցությամբ և այլ պատճառով։ Ուստի հանցագործության և դրա առաջացման պատճառների վերացման հասկացության մեջ են մտնում ոչ միայն ընդհանուր, այլև կոնկրետ պատճառները։

Այդ բոլորը, սակայն չեն բացառում հանցագործության ընդհանուր պատճառի և առանձին հանցագործության կոնկրետ պատճառի առանձնահատկությունների հնարավորությունները։

Այս վերջին հանգամանքը բացատրվում է նրանով, որ իբրև լանոն. բացասական բնույթի նյութական և ոչ նյութական ու սոցիալական գործոնները միահյուսվելով միայն հանցագործության առաջացման հնարավորություն են ստեղծում։

Մեր որոշ իրավաբան-տեսաբաններ այս հարցը լուսաբանելու ժամանակ փաստորեն նույնացնում են հանցագործության ընդհանուր պատճառներն ու առանձին հանցագործության կոնկրետ պատճառները։ Օրինակ, պրոֆ. Ա. Ա. Գերցենզոնը պնդում է, որ պետք է բացահայտել հանցագործության «...անմիջական պատճառները (կամ պայմանները), որոնք առաջացրել են տվյալ հանցագործությունը կամ որոնք նպաստել են դրանց կատարմանը»[9]։ Մի այլ հեղինակ՝ Ա. Բ. Սախարովը նույն հարցի մասին նշում է, որ տվյալ հանցագործության առաջացմանը նպաստող կամ հեշտացնող հանգամանքները հանդիսանում են կոնկրետ հանցագործության առաջացման պատճառները[10]։ Վերոհիշյալ հեղինակները ոչ միայն չեն բացահայտում հանցագործության ընդհանուր և կոնկրետ պատճառները, դրանց օրգանական կապերը, այլև փաստորեն միևնույն հասկացության տակ են դնում արարքի պատճառն ու կատարելուն նպաստող հանգամանքները։ Նրանք քննության առարկա չեն դարձնում

---

9 «Советское государство и право», 1961, № 7, стр. 67.

10 А. Б. Сахаров, О личности преступника и причинах преступности, М., 1961, стр. 203.

անձի բարոյական ձևավորման պրոբլեմը, թեև այն կենսական նշանակություն ունի տվյալ խնդրի պարզաբանման համար։

Անձի բարոյական ձևավորումը բացառիկ բարդ պրոցես է։ Այն տեղի է ունենում ինչպես սկզբնական սոցիալական խմբերի դաստիարակչական աշխատանքների, այնպես էլ հասարակական կյանքի կացութաձևի բոլոր կողմերի ներգործությամբ։ Գտնվելով որոշակի իրադրության մեջ, մարդը գործում է իր աշխարհայացքի, գիտակցության, կամքի, ֆիզիկական ու հոգևոր հատկություններին համապատասխան։ Վերջիններս գոյանում են նրա հասարակական կյանքի, միջավայրի և այլ պայմանների ազդեցությամբ։ Ընդ որում վճռական նշանակություն ունեն շրջապատող իրադրությունն ու պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, թե նա իր կյանքի ընթացքում ո՞ւմ հետ է փվում։ Այդպիսիներն իրենցից ներկայացնում են զանազան հանգամանքների մի բարդ համակցություն։ Նյութական կարգի աննպաստ գործոնները և դաստիարակչական աշխատանքների թերությունները խաչաձևվելով, կարող են բացասական ազդեցություն թողնել անձի բարոյական ձևավորման վրա և հակահասարակական հայացքների առաջացման հնարավորություն ստեղծել։ Կոնկրետ իրադրության մեջ, մարդու անմիջական միջավայրում լինում են օբյեկտիվ ու սուբյեկտիվ կարգի հանգամանքներ, որոնք ըստ էության արտահայտում են նորի, առաջադիմականի պայքարը հնի, իր դարն ապրածի դեմ։ Այս պայմաններում հին նպաստավոր հանգամանքների գոյության դեպքում հաճախ իրեն դրսևորում է իբրև հանցագործություն։

Անձի հանցավոր դիտավորության ձևավորման վրա ազդում են սոցիալական ու բարոյական բնույթի բացասական գործոնները։ Նրա հանցավոր արարքի շարժառիթների սիստեմը որոշվում է նրա բարոյական հայացքներով ու գաղափարներով։ Մարդու բնավորության գծերը հասարակական պրակտիկայի արդյունք են, բայց հավերժական չեն։ Նրա գիտակցության ու հոգեբանության առանձնահատկությունները որոշակիորեն կախված են անձի կողմից գաղափարների ու հայացքների, վարք ու բարքերի, բարոյական նորմերի ու կանոնների յուրացումից, նրա կյանքի առանձնահատկություններից, սակայն դրանք բնածին չեն։

Այդ բարոյական ձևավորմանը նպաստում են թե՛ դրական և թե՛ բացասական գործոնները։ Վերջիններս կարելի է ստորաբաժանել երեք գլխավոր խմբի՝ ա) բացասական գործոններ, որոնց միահյուսումը հանցագործության առաջացման պատճառ է դառնում, բ) այնպիսի բացասական գործոններ, որոնք հանցագործության առաջացման առիթ են հանդիսանում և գ) այնպիսի բացասական գործոններ, որոնք նպաստում են հանցագործության հետևանքի առաջացմանը։

Անձի բարոյական ձևավորման վրա բացասական ներգործություն են ունենում սկզբնական սոցիալական խմբերի աշխատանքների թերությունները, հասարակական կիցության արատները, բացերը։ Սկզբնական սոցիալական խմբերի մեջ գլխավոր դերը պատկանում է ընտանիքին, դպրոցին, բնակավայրին։ Ընտանիքն այն սոցիալական խումբն է, որի գրկում երեխան սկզբնական դաստիարակությունն է ստանում։ Դպրոցը սկզբնական սոցիալական խմբերից ամենակարևոր ու վճռական նշանակություն ունեցող հիմնարկներից մեկն է, որտեղ պատանիներն ու անչափահասները ստանում են բարոյական ու գաղափարական դաստիարակություն, ձևավորվում ու կերտվում նրանց

վարք ու բարքերի, հայացքների ու հոգեբանության գլխավոր կողմերը։ Սակայն ամեն ինչ ընտանիքում ու դպրոցում լավ չի լինում, թերությունները միահյուսվելով հակահասարակական արարքներ են առաջացնում։ Այսպես, Լափանի շրջանում հանցագործություն կատարած անչափահասների 79,1 տոկոսը սովորողներ են, 16,7 տոկոսը աշխատող, միայն 4,2 տոկոսը չեն աշխատում ու չեն սովորում։ Ընտանեկան վատ դաստիարակությունը և դպրոցի աշխատանքների թերությունները հանցագործության առաջացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծել։ Հինգ դպրոցական դեռահասներ զբաղվում են հակահասարակական արարքներով, բայց ոչ ծնողները և ոչ էլ դպրոցի մանկավարժական անձնակազմը չի զբաղվում նրանց հարցով։ Նրանք դրժբախտացնում են դեռահաս դպրոցական աղջկան և մոտ վեց ամիս տանջում նրան։ Մ. Մամեդովը նաև բնակարանային գողություն է կատարում։ Նա ծխում է, հարբեցողությամբ զբաղվում, անկանոն է հաճախում դպրոց, իսկ նրա մանկավարժ մայրը՝ Ռ. Բ., որը նույն դպրոցի ուսուցչուհի է, «չի նկատում այդ այլանդակությունները»[11]։

Երեխաների դաստիարակության վրա իրենց կնիքն են դնում ոչ միայն ընտանիքն ու դպրոցը, այլև բնակավայրը։ Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը չտեսնված չափերով ավելացել է։ Նման փոփոխությունները նոր հարաբերություններ ու երևույթներ են առաջացնում։ Նույն շենքում, նույնիսկ նույն միջանցքում բնակություն են հաստատում միմյանց բոլորովին անծանոթ ընտանիքներ, որոնք շատ հաճախ տարբեր կենցաղ ու ապրելակերպ ունեն, հետևաբար բախվում են նրանց սովորություններն ու ընտելությունները։

Անձի բարոյական ձևավորման գործում բացառիկ կարևորություն ունի աշխատանքային դաստիարակությունը։ Ընտանիքի, դպրոցի, բնակավայրի ներգործությունը որոշակի հիմքեր է ստեղծում, որ տակավին ավարտուն չէ և ենթակա է փոփոխությունների ու կատարելագործման։ Աշխատանքը հղկում, կերտում է մարդուն, նրան տալիս կոլեկտիվիզմի ոգի, ազնվություն, հմտություն։ Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք դաստիարակելը վճռական նշանակություն ունի անձի բարոյական ձևավորման համար։

Սակայն աշխատավորների կոլեկտիվներում ամեն ինչ դրական չէ, նրանց աշխատանքները զերծ չեն սխալներից, թերություններից, բացերից, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում նաև մարդկանց բարոյական կերպարի վրա։ Սկզբնական սոցիալական խմբերի դաստիարակչական աշխատանքների թերությունները վերացնելու և մարդուն ճիշտ դաստիարակություն տալու փոխարեն, ավելի են խորանում այդպիսիները և հանգեցնում հակահասարակական արարքների առաջացմանը։

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունն անժխտելիորեն ապացուցում է, որ մեր հանրապետությունում անձի դեմ ուղղված հանցագործությունների լուրջ պատճառներ են հանդիսանում կենցաղային խորթ ու վտանգավոր բարոյական հայացքներն ու գաղափարները։ Հին աշխարհի դաժան օրենքներն ամենից առաջ ուղղված են եղել կնոջ դեմ։ Կինը կրել է ամեն տեսակ տառապանքներ ու հալածանքներ։ Կնոջ հարցը, ըստ էության, լուծեց միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Կինը տղամարդուն հավասար իրավունք ստացավ։ Շատ գործ է կատարվել նաև կնոջը

11 Այս տվյալները վերցված են Լափանի շրջանային դատախազությունից։

տղամարդու հետ փաստական հավասարության մեջ դնելու բնագավառում, բայց այդ հարցը տակավին հեռու է լրիվ ու ամբողջական կերպով լուծված լինելուց։ Դեռևս շատ բան պետք է արվի այդ հարցը վերջնականապես լուծելու համար։ «Կնոջ լիակատար ազատագրման և տղամարդուն իսկապես հավասար դարձնելու համար հարկավոր է,— ասում է Վ. Ի. Լենինը,— որ հասարակական տնտեսություն լինի և կինը մասնակցի ընդհանուր արտադրողական աշխատանքներին»[12]։ Բացի այդ, խորթ հայացքներն ու գաղափարներն ամենից շատ ամուր են ծվարած հենց ընտանեկան հարաբերությունների բնագավառում և ուղղված են կնոջ պատվի ու արժանապատվության, կյանքի ու առողջության դեմ։ Քիչ չեն այնպիսի տղամարդիկ, որոնք կնոջը համարում են ոչ թե իրենց կյանքի ընկերը, այլ իրենց սեփականությունը և ձգտում են վարվել նրանց հետ այնպես, ինչպես իրենց կամքն է թելադրում։ Ահա երկու օրինակ այդ մասին։ Ռ. Մնացականյանը խորթ հայացքներ ու գաղափարներ, վարք ու բարքեր ունեցող մարդ է։ Նա երկու անգամ դատական պատասխանատվության է ենթարկվել, բայց չի ուղղվել։ Նա թեև արդեն երեք երեխա ունի, բայց դարձյալ կնոջն իր ստրկուհին է համարում և հետը վարվում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում։ Դաժան հալածանքներն ու տանջանքները տևում են տարիներ շարունակ։ 1964 թ. նա մի անստորագիր նամակ է ստանում այն մասին, որ իր կինը՝ Ջ. Մնացականյանը կապված է իրենց բարեկամ Մ. Խաչատրյանի հետ։ Նա անգամ չի ստուգում այդ նամակի ճշտությունը և կնոջը նստեցնելով իր ավտոմեքենան տանում է դեպի Սովետաշեն. երկաթով հարվածում է գլխին, ատրճանակով երկու անգամ կրակում, ապա վրան բենզին լցնում, այրում ու դիակը նետում է աղբակույտը։

Մի այլ օրինակ, Ս. Մարգարյանը (Լենինականի տեքստիլ կոմբինատի ատխատող) 1958—1963 թթ. առանց զագսում գրանցվելու չորս անգամ ամուսնանում է։ Նա կնոջը համարում է իր կամքն առանց առարկության կատարող ծառա, հալածում է, ծեծում, անպատվում, ստորացնում։ 1961 թ. նրան դատական պատասխանատվության են ենթարկում՝ կնոջը մարմնական վնասվածք պատճառելու համար, բայց չի ուղղվում։ Նրա բարոյական քայքայվածությունն այն աստիճանի է հասնում, որ մի կնոջ ներկայությամբ սեռական հարաբերություն է ունենում մյուսի հետ։ Երկար ստորացումներից հետո նրա կինը ինքնասպանություն է գործում, որից հետո միայն Մարգարյանը խիստ կերպով պատժվում է դատարանի կողմից[13]։

Այժմ անցնենք այն գործոնների վերլուծությանը, որոնք հանցավոր դիտավորության արտաքին առիթ են հանդիսանում։ Արտաքին առիթի բացասական գործոնները կարող են նշանակություն ունենալ միայն այն դեպքում, երբ առկա են հանցագործություն ծնող բացասական գործոններ։ Հանցագործությունը մարդու գիտակցական արարք է, նրա կամային սուբյեկտիվ ակտը, որը կատարվում է սուբյեկտի հատուկ վճռով։

Այստեղից, ամենից առաջ երևում է, որ հանցագործության պատճառը և հանցանքի դրսևորման արտաքին առիթը չի կարելի նույնացնել։ Եթե հանցագործության առաջացման պատճառներ չլինեն, ապա հանցագործության առաջացման արտաքին առիթը ոչ մի նշանակություն ունենալ չի կարող։ Հենց այն հանգամանքը, որ արտաքին առիթը միջոց է դառնում հանցավոր արարքի

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 30, էջ 33։

13 Տվյալները վերցված են ՀՍՍՀ գերագույն դատարանի արխիվից։

դրսևորման համար, ցույց է տալիս, որ հանցավոր արարքի պատճառը գլխավորն է։ Ընդ որում, արտաքին առիթը կարող է զգալի, նույնիսկ վճռական նշանակություն ունենալ, բայց դարձյալ չի կարող հանցագործություն առաջացնել, եթե հանցավոր արարքի պատճառը գոյություն չունենա։ Եթե մարդն աննշան առիթով վտանգավոր հանցագործություն է կատարում, ապա դրա պատճառն այն է, որ նրա մոտ մինչ այդ արարքի կատարումը հակահասարակական հայացքներ են ձևավորվել։ Այն հանգամանքը, որ հիմք է ծառայել հանցագործություն կատարելու համար, կարող է կոնկրետ դեպքում դրսևորվել տարբեր առիթներով՝ շահի, վրեժի, խանդի, շահամոլության և այլն։

Հանցագործության առաջացման պատճառը և արտաքին առիթը միահյուսվելով է, որ պրակտիկորեն կատարվում է հանցագործություն։ Մարդու բարոյական ձևավորումը տեղի է ունեցել տևական ժամանակաշրջանում, և բացասական գործոնների ազդեցության ներքո նրա մոտ գոյացել են հակահասարակական հայացքներ, որոնք այս կամ այն առիթով դրսևորվում են իբրև հանցագործության կոնկրետ դեպք։

Բոլոր իրավաբան-տեսաբանները մի միասնական կարծիքի են այն հարցում, թե հարբեցողությունը հանցագործության առաջացման գործում մեծ դեր է խաղում և դրա դեմ անհաշտ պայքարը կենսական նշանակություն ունի հանցագործությունները վերացնելու համար։ Եվ իրոք, մեր հանրապետությունում անձի դեմ ուղղված հանցագործությունների կատարման ժամանակ սուբյեկտների 9,5 տոկոսը 1961 թ. և 19,3 տոկոսը 1964 թ. հարբած են եղել։ Ընդ որում բռնաբարության վերաբերյալ գործերով համապատասխանաբար 15,1 և 30,6 տոկոս, մարմնական ծանր վնասվածքների պատճառման գործերով՝ 10,5 և 32,6 տոկոս։ Առանց ծանրացուցիչ հանգամանքների կատարված դիտավորյալ սպանությունների գործերով՝ 8,8 և 20,5 տոկոսը։ Հետևաբար, բռնաբարության վերաբերյալ գործերով հանցագործները հարբած վիճակում 1964 թ. կատարել են երկու անգամ ավելի թվով հանցանք, քան 1961 թ.։ Դիտավորյալ սպանություն կատարողներից հարբած վիճակում եղածների թիվը ավելացել է 2,5 անգամ, ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու գործերով՝ ավելի քան 3 անգամ[14]։

Այս բոլորը նշանակում է, որ հարբած վիճակում հանցագործություն կատարողների տեսակարար կշիռը արագորեն ավելանում է։ Բնորոշ է այն հանգամանքը, որ հարբեցողության հարցի նկատմամբ տարակարծություն չկա։ Սակայն այն հարցը, թե հարբեցողությունը հանցագործության առաջացման պատճառ է, թե առաջացմանը նպաստող հանգամանք, թե արտաքին առիթ՝ լուրջ տարակարծություն գոյություն ունի։ Մի քանի իրավաբան-տեսաբաններ նույնիսկ ավելի հեռուն են գնում և փաստորեն անտեսում հանցագործության առաջացման իրական պատճառները։ Օրինակ, Ա. Ա. Սոկոլովն անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների պատճառներն, ըստ էության, համարում է հարբեցողությունը և անկուլտուրականությունը, իսկ դպրոցի դաստիարակչական աշխատանքների թերությունները՝ դրանց կատարմանը նպաստող հանգամանքներ[15]։

Հարբեցողությունը ֆիզիկապես ու բարոյապես քայքայում է մարդուն, որի հետևանքով էլ նա հեշտությամբ հանցագործության գիրկն է գլորվում։

---

14 Տվյալները վերցված են ՀՍՍՀ գերագույն դատարանի արխիվից։

15 «Советское государство и право», 1964, № 5, стр. 88.

Նա հարբած վիճակում ծեծում է կնոջը, պատճառելով մարմնական վնասվածքներ, երբեմն էլ մահ։ Միամտություն կլիներ կարծել, թե այդ բոլորը նա կատարում է հարբած լինելու պատճառով։ Արարքների իսկական պատճառը նրա մոտ խորթ հայացքների ու գաղափարների առկայությունն է։ Հարբած մարդը գիտակցում է իր արարքները և կարող է ղեկավարել դրանք։ Հարբեցողությունը ոչ թե հանցագործության առաջացման բուն պատճառն է, այլ այդպիսին լրացնող ու նրան կենսունակություն տվող հանգամանք։ Հարբեցողությունն այնպիսի բացասական գործոններից մեկն է, որը միահյուսվելով այլ բացասական գործոնների հետ հանցագործություն է առաջացնում։

Այժմ քննարկենք հանցագործության բացասական գործոնների երրորդ խումբը՝ հանցագործության հետևանքի առաջացմանը նպաստող գործոնները։ Այս խումբը նույնպես լուրջ վտանգ է ներկայացնում և, ըստ էության, հանցագործության առաջացման պատճառի և արտաքին առիթի բացասական գործոնների հետ միասին կազմում է մի ամբողջություն, ավելի է բարձրացնում հանցագործության վտանգավորության աստիճանը։ Մյուս կողմից էլ՝ հանցավոր արարքի հետևանքի առաջացումը անհնարին դարձնելու դեպքում կարող է նվազեցնել կամ բոլորովին կորցնել արարքի վտանգավորությունը։ Օրինակ, հանցագործը փորձում է դանակով հարվածել, բայց կանխվում է, ապա առաջանում է որակական փոփոխություն։ Եթե ինքը հանցագործն է զղջում և չի հարվածում, ապա արարքի վտանգավորությունը կորչում է, իսկ եթե ուրիշներն են կանխում, ապա նվազում է վտանգավորությունը։ Այդ մասին են վկայում ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 105, 106, 109 հոդվածների սահմանումները։

Հանցագործության երրորդ խմբին պատկանող բացասական գործոններն այնքան կապված չեն սուբյեկտի, որքան դրա օբյեկտի հետ։ Շատ դեպքերում անձն իր հանցավոր դիտավորությունը չի կարողանում իրականացնել, եթե դրա համար օբյեկտիվ հանգամանքները նպաստավոր չեն։ Քննարկվող բացասական գործոնները զանազան տիպի են լինում և կապվում են տեղի, ժամանակի և այլ հանգամանքների հետ։ Հանցագործության հետևանքի առաջացման ուղղությամբ գործող ֆակտորներն ավելի հեշտ է պարզել, քան առաջին երկու խմբի գործոնները։ Դա բացատրվում է նրանով, որ երրորդ խմբին պատկանող բացասական գործոնների զգալի մասը շարունակում է իր գոյությունը հանցագործությունը կատարվելուց հետո ևս։ Այդ է պատճառը, որ դատա-քննչական օրգանները ոչ ճիշտ կերպով իրենց ուշադրությունը կենտրոնացնում են այդ խմբի հարցի վրա և անտեսում են առաջին երկու խմբին պատկանող գործոնները, որոնց բացահայտումն ավելի դժվար է և պահանջում է լուրջ ու քրտնաջան աշխատանք։ Նման միակողմանիությունը վնասում է հանցագործության դեմ մղվող պայքարին, մանավանդ հանցագործության նախազգուշացման ու կանխման գործունեությանը։

Այժմ քննարկենք հանցագործության նախազգուշացման ու կանխման խնդիրը, որը հանցագործության վերացման համար մղվող պայքարի գլխավոր հարցն է կազմում. Հանցագործության նախազգուշացումն ու կանխումն այն միջոցառումների ամբողջությունն է, որը հանցագործությունն արմատախիլ անելու նպատակով պետությունը և լայն հասարակայնությունը կիրառում են։ Գլխավորն այդ բնագավառում՝ հասարակության բոլոր անդամների նյութական ապահովվածության և կուլտուրական մակարդակի պատշաճ բարձրացումն է, նրանց կոմունիստական դաստիարակությունը։ Դրա հետ միասին կենսա-

կան նշանակություն ունի այն հատուկ միջոցառումների համակցությունը, որի նպատակն է արմատախիլ անել հանցագործությունները։

Հանցագործության նախազգուշացման ու կանխման հասկացություններն այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ հաճախ մեկը գործ է ածվում մյուսի փոխարեն կամ մեկի անվան տակ հասկանում են թե՛ մեկը և թե՛ մյուսը։ Սակայն դրանք չեն նույնանում։ Կանխել կարելի է այն, ինչ արդեն ծնունդ է առել կամ սկսվել է ձևավորվել, բայց եթե չկանխվի, ապա կշարունակվի ու կստանա նոր որակ, այդ դեպքում կանխման միջոցառումը խաղում է վճռական դեր և բացառում հանցավոր արարքի կատարումը։ Օրինակ, զանցանքի հանցագործության վերաճման կանխումը կազմում է հանցագործության դեմ մղվող պայքարի կարևորագույն խնդիրներից մեկը։ Դրա նշանակությունը շարունակ աճում է, մեծանում, բայց դա միակ միջոցառումը չէ։ Հանցագործության կանխումը կարող է տեղի ունենալ նաև նախազգուշական միջոցառումներով, երբ որոշակի տեղեկություն է ստացվում սպառնացող արարքի նախապատրաստման վերաբերյալ և այդ հիման վրա կանխարկող միջոցներ են կիրառվում։ Նախազգուշական ու կանխարկող միջոցառումները կարող են տարբեր տեսակի ու բնույթի լինել։ Երբ տվյալ անձը սպանության սպառնալիք է տալիս և այդ կապակցությամբ նրան կանչում են միլիցիայի օրգանը, նախազգուշացնում, ստորագրություն վերցնում, հաշվառման տակ առնում և հետևում նրա վարքագծի ընթացքին, ապա նախազգուշական միջոցները կարող են բացառել հանցավոր դիտավորության ձևավորումը, իսկ եթե այդ տեղի չի ունենում, ապա կարող են կանխել արարքի կատարումը՝ ձևավորվելու դեպքում։ Տվյալ օրինակում նախազգուշացումն ու կանխումը կարող են մեկը մյուսի շարունակությունը կազմել, իսկ հարցը նախազգուշացման պրոցեսում լուծելու դեպքում կարող է կանխման անհրաժեշտություն չառաջանալ։

Հանցագործության նախազգուշացման հասկացությունը ավելի լայն ու խոր բովանդակություն ունի, քան կանխման հասկացությունը։ Հանցագործության նախազգուշացման տակ հասկացվում են պետության ու հասարակության կողմից կիրառվող այն միջոցառումները, որոնք ուղղված են հանցագործության առաջացման պատճառների, արտաքին առիթների և հանցագործության հետևանքի առաջացման բացասական գործոնների վերացմանը։ Այդ միջոցառումները կարելի է բաժանել երկու խմբի, այն է՝ ընդհանուր միջոցառումներ և հատուկ միջոցառումներ։ Առաջին խմբին են պատկանում այն միջոցառումները, որոնք ձեռք են առնվում պետության և լայն հասարակության կողմից՝ սովետական մարդկանց նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման, մասսաների գաղափարական ու բարոյական հայացքների մշակման, նրանց կոմունիստական դաստիարակության նպատակով, ինչպես նաև բուրժուական գաղափարախոսության և բարոյական հայացքների, խորթ սովորությունների ու ընտելությունների վերացման համար մղվող պայքարի կազմակերպումը։ Հանցագործության նախազգուշացման հատուկ միջոցառումներից է՝ դատարանի, դատախազության, քննչական ու միլիցիայի օրգանների կողմից հանցագործության վերացման ուղղությամբ տարվող աշխատանքը։ Դրա տակ հասկացվում են ամենից առաջ՝ 1) կատարված բոլոր հանցագործությունների բացահայտումը։ Այս հարցն ունի իր զանազան կողմերը՝ երբ հանցագործությունը չի բացահայտվում և հանցավորը չի մերկաց-

վում, ուստի նա նորից հանցագործություն կատարելու հնարավորություն է ստանում։ Նրա մեջ խարուսիկ պատկերացում է ստեղծվում այն մասին, որ կարող է միշտ էլ հանցագործություն կատարել և մնալ անպատիժ։ Դրա հետ միասին բացասական ներգործություն է ունենում հասարակության անկայուն, հանցագործություն կատարելու հակումն ունեցող մարդկանց նկատմամբ։ 2) Հետաքննության և նախաքննության կոնկրետ գործերով բացահայտվում են տվյալ հանցագործության առաջացման պատճառները, արտաքին առիթը, հանցանքի հետևանքի առաջացմանը նպաստող հանգամանքները։ Մի գործով դրանք պարզվում են ավելի հիմնավոր, իսկ մյուսով ավելի աղոտ կերպով։ Ուստի մի դեպքում կարող է գործը քննողը, դատախազը, դատարանը կոնկրետ միջոցառումներ մշակել բացահայտված թերությունները վերացնելու նպատակով, մյուս դեպքում մի շարք գործերի քննության ժամանակ երևան հանած թերությունների հիման վրա մշակել միջոցառումներ։ 3) Հետաքննության օրգանները, դատախազությունը, դատարանը հաճախ են զանազան հաղորդումներ, տեղեկություններ, ահազանգումներ, դիմումներ ու գանգատներ ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին. նրանք պարտավոր են այդպիսիներին ժամանակին ընթացք տալ և միջոցառումներ մշակել, նախազգուշացնել ու կանխել հանցավոր արարքների ձևավորումը կամ կատարումը։ Մեր պայմաններում հատուկ նշանակություն ունի կնոջ նկատմամբ կիրառվող հանցավոր ոտնձգությունների ժամանակին նախազգուշացումն ու կանխումը. 4) Բացառիկ կարևորություն ունի կրկնահանցագործության կանխումը՝ կալանքից պատիժը կրած ու ազատված կամ այլ պատժի դատապարտվածի, վաղակերտ-պայմանական ազատվածների, երաշխավորությամբ կոլեկտիվների վերադաստիարակմանը հանձնվածների, առասարակ մի անգամ հանցանք կատարած անձի կողմից նոր հանցագործության կատարման նախազգուշացումն ու կանխումը։ 5) Հանցագործության դեմ մղվող պայքարի կազմակերպված բնույթն ու նպատակասլացությունը, վարչական-դատական ու հասարակության ներգործության միջոցառումների միասնական, համագործակցված հետևողական ու համառ վարելու կարևոր պայմաններից մեկն է հանցագործության վերացման համար մղվող պայքարում։ Կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունների, հասարակական կարգի պահպանման ժողովրդական դրուժինաների, թաղային կոմիտեների, ընկերական դատարանների, կոմերիտական շտաբների, միլիցիայի ու դատախազության, դատարանի ու քննչական օրգանների միասնական ճակատը, պայքարի համակցումը, մեկը մյուսին անհրաժեշտ օգնություն ցույց տալը, մասսաների մեջ հանցագործությունների նկատմամբ ատելության սերմանումը՝ հանցագործության վերացման խնդրի լուծման կարևոր պայմաններ են։ Որքան առաջ է ընթանում մեր հասարակությունը, այնքան անհանդուրժելի են դառնում զանցանքներն ու հանցանքները։